կին[1], եւ ամենայն կարգ[2] եկեղեցւոյ[3] զայն ուրբաթ պահել հրամայէն եւ զայլ ուրբաթսն ի Զատկէն մինչեւ ցՊենտեկոստն[4] ուտել[5]:

[6]Եւ որ զԾնունդն յառաջ քան զՅայտնութիւնն[7] առնեն՝ մեծ մեղք են. եւ յայտ յԱւետարանէ[8] անտի է, որ ասէ. «Եւ[9] Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս»[Մատթ. Ա, 18]: Եւ ի սոյն դէմս աւրինակի փակեալ կայ[10] Գիր ընթերցուածովն, զորս կարգեալ են ուղղափառացն սրբոց: Միտ դի՛ր խոստովանութեանն՝ որ նախ քան զմեզ հայրապետք [...][11]:

Արդ՝[12] այս աւանդ կացցէ՛ ի վիճակիս մերում, եւ այս մատենագիր եղիցի՛ ամենայն Հայաստանեայց[13], որք ընդ ձեռամբ մերով հաւանեալ[14] կան ի պահեստի:

Ահաւասիկ ես՝ Յովհաննէս Հայոց կաթուղիկոս, գրեցի իմով ձեռամբ զայս կանոնս, հաստատութեամբ սուրբ հաւատոյ, յընդունելութիւն ուղղափառաց, ի պայծառութիւն ուղղակարգ եկեղեցւոյ[15], յընդունելութիւն հաւատացելոց եւ ի գովութիւն բարեբանութեան համագոյ յԵրրորդութեանն[16]. ամէ՛ն:

[17]Դարձեալ հաստատութեամբ[18] հիմն արկելով հրաման տամ մեծի փիլիսոփայիս Արշարունեաց քորեպիսկոպոսի, զի զԱռաջաւորսն ընդ սուրբ պահս Քառասնեկին մեկնումն արասցէ, որ աղխեալ[19] կնքեցաւ ի մէնջ Ե-աւրեայ[20] Առաջաւոր պահոցն, եւ Պասեքին Բ շաբաթս լուծեալս[21] Բարեկենդան[22] կոչին եւ անխտրաբար յամենայն կերակրոց:

Արդ՝ ձեռնարկու լե՛ր, սիրելի՛դ Աստուծոյ, քա՛ջդ յիմաստակս եւ նախընտի՛րդ[23] ի վարդապետս Հայոց, կարկի՛չդ Յունաց եւ դադարեցուցի՛չդ[24] աղանդոյն Քաղկեդոնի եւ կորուսիչ ա-

---

1 m *աւազակն* փխ *աւազակին* (aii$_1$)

2 m *կարգք* փխ *կարգ* (aii$_1$)

3 m *եկեղեցո*

4 i *ցՊենտեկոսն*, m *ցՊենտակոստն* փխ *ցՊենտեկոստն* (ai$_1$)

5 Հմմտ. էջ 118, ծան. 22:

6 s *Եւ զկանոնս սրբոյն Սահակայ եւ Յոհաննու Մանդագունոյ վերստին հաստատեցին* փխ *Եւ որ...յԵրրորդութեանն. ամէ՛ն* (aii$_1$m) (քսան տող) (s-ի այս հաղորդածի հիման վրայ, թերեւս, կարելի է նաեւ համարել, որ պահպանուած գրչագրերում առկայ բնագիրը հեղինակային սկզբնօրինակի համեմատ պակաս ունի, ուստի այս պարբերութեան վերջին, աւարտուն տպաւորութիւն չթողնող նախադասութեան մէջ (*«Միտ դի՛ր...նախ քան զմեզ հայրապետք»*) գուցէ անհրաժեշտ է իբրեւ վերականգնում լրացնել գոնէ Սահակ Պարթեւի եւ Յովհան Մանդակունու անունները (հմմտ. «Կանոնագիրք Հայոց»-ի հրատարակիչ Վազգէն Յակոբեանի դիտարկումը Յովհան Մանդակունու կանոնախմբի առիթով. տե՛ս հտ. Ա, էջ 641-643):

7 m *զՅայտնութիւն* փխ *զՅայտնութիւնն* (aii$_1$)

8 i *Աւետարանէն է* փխ *յԱւետարանէ* (ai$_1$m)

9 m չիք *Եւ* (aii$_1$)

10 m *կայր* փխ *կայ* (aii$_1$)

11 Քառակուսի փակագծով նշուած ենթադրուող պակասի մասին տե՛ս ծան. 763:

12 a չիք *Արդ* (ii$_1$m)

13 ii$_1$m *Հայաստանեաց* փխ *Հայաստանեայց* (a)

14 Բոլոր պահպանուած ձեռագրերում առկայ այս *հաւանեալ* բառի փոխարէն գուցէ վերականգնելի է *հաւաքեալ*՝ աւելի եւս պարզաբանելով, որ հեղինակի ասած «այս մատենագիր» խօսքը հաւանաբար վերաբերում է Հայոց կաթողիկոսարանում դաւանական երկերի ինչ-որ մի հաւաքածոյի ստեղծմանը (հմմտ. «ընդ ձեռամբ մերով...կան ի պահեստի»), ճիշտ այնպէս, ինչպէս Յովհաննէս Օձնեցու կողմից համախմբուած «Կանոնագիրք Հայոց»-ի յիշատակարանում խօսւում է կանոնական երկերի ի մի բերման մասին (հմմտ. «...կամեցայ զբովանդակ զառ ի նոցանէն կանոնական սահմանեալ բան ի միում տեղւոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ արմատացուցանել»):

15 m *եկեղեցոյ*

16 m *բարէբանութիւն համագո յԵրրորդութեան* փխ *բարեբանութեան...յԵրրորդութեանն* (aii$_1$) (նաեւ հմմտ. այս էջի ծան. 6)

17 s *Իսկ յետ այսր Գրիգորէս Արշարունեաց քորեպիսկոպոս շարադրէր զՄեկնութիւնս ընթերցուածոց եկեղեցւոյ* փխ *Դարձեալ...յաւիտեանս. ամէ՛ն* (aii$_1$m) (քառասուներկու տող, մինչեւ երկի աւարտը):

18 m *հաստատրութեամբ* փխ *հաստատութեամբ* (aii$_1$)

19 ai *ախեալ* փխ *աղխեալ* (i$_1$m)

20 i$_1$m *Ե-օրեա*

21 a *լուծեալ* փխ *լուծեալս* (ii$_1$m)

22 i$_1$m *Բարէկենդան* փխ *Բարէկենդան* (ai)

23 m *նախընդի՛ր*

24 m *դադարեցուցի՛չ* փխ *դադարեցուցի՛չդ* (aii$_1$)